հողերով, ուր բուսնում են ընտիր հացահատիկներ և բոյսեր, բայց չնայած գիւղի այսօրինակ կազմութեան, այնուամենայնիւ գիւղացիութիւնը գտնւում է տնտեսական նեղ դրութեան մէջ, որ հետևանք է անվերջ հարստահարութիւնների և կեղեքումների։ Դրեթէ տասնեակ տարիներից ի վեր այս գիւղը զանազան աղաների կամայականութեանց ենթակայ է, որոնք իրենց ուզածի պէս ճնշում և հարստահարում են խեղճ, աշխատաւոր գիւղացիութեան։ Ահա նրանցից մէկն է յիշեալ Ֆարաջի լամուկը. սա 1915 թւին զինուած ձիաւոր խմբով յարձակւում է գիւղի վրայ և հարստահարում. առնում է 1500 լիտր գարի, 1500 լիտր ցորեն, 50 ոչխար, 10 կարպետ, մի գորգ և մի հրացան։ Այնուհետև 1918 թւին, իր զինուած խմբովը գալիս է Զաֆէր-Ղուլի Մահմուտ խանը և կողոպտում գիւղը. առնում է 200 թուման կանխիկ փող, 60 բեռ խոտ և 20 հաւ։ Նոյն Զաֆէր-Ղուլին գարնանը նորից յարձակւում է գիւղի վրայ և առնում 50 թուման փող, 50 լիտր գարի ու 60 հատ էլ հաւ։

Այս և այսօրինակ հարստահարութիւնների հետևանքով Դրախտակի հայ գիւղացիութիւնն այսօր գտնւում է տնտեսական ծայրայեղ դրութեան մէջ։ Այսօր նրանք ոչ թէ ապրում են, այլ մի կերպ քարշ են տալիս իրենց թշուառ գոյութիւնը։ Կան շատ ընտանիքներ, որոնք խոտ են ուտում։

Ահա այս է սիրելիս, և Դրախտակի հայ գիւղացիութեան շատ աղօտ պատկերը։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	30
2	Չունևոր	44
3	Միջակ	80
4	Ունևոր	40
5	Հարուստ	—
	Ընդամենը	194